մնոջ։ Նույն վայրից հայտնաբերվել են անտիկ ժամանակաշրջանի ճարտարապետական բեկորներ։ Քաղաքի կենտրոնական թաղում բացվել են հնագույն կաթողիկոսարանի ավերակները։ Նրա միջուկն էր հանդիսանում սյունազարդ մեծ դահլիճը, որտեղ պահպանվել են մոնումենտալ խարիսխներ։ Պալատը, կառուցված լինելով V դարի 70-ական թթ., գոյություն է ունեցել մինչև VI դարի 70-ական թթ.։ VII դարի առաջին տասնամյակներում, Կաթողիկե եկեղեցու կառուցման ժամանակ, պալատի ավերակների տեղը վեր է ածվել շինարարական հրապարակի, իսկ IX դարում այդ տարածքը ինտենսիվ կերպով կառուցապատվել է։ Միջնաբերդի ստորին մասում պեղվել է ամրոցի մի փոքր հատված, որը երկու կողմից կառուցապատված է եղել XII—XIII դդ. շենքերով։ Այստեղ հայտնաբերվել են բազմաթիվ առարկաներ, դրամներ։

ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Կ. Ա. Կոստանյանի և Ա. Ա. Քալանթարյանի «Ապակու արտադրության հետքեր վաղ միջնադարյան Դվինում» զեկուցումը նվիրված էր Հայաստանի այդ ժամանակաշրջանի արհեստի կարևոր ճյուղերից մեկին։ Կենտրոնական թաղամասում V—VI դդ. կաթողիկոսական պալատի տեղում հայտնաբերվել են VII դարի ապակեգործական արհեստանոցի հետքեր։ Այստեղ գտնվել են աղյուսե վառարաններ, ապակե անոթների խոտան, ապակե զանգվածների բեկորներ, լուսամուտի ապակիներ, հալոցներ և այլն։ Հայտնաբերված ապակու քիմիական և սպեկտրալ անալիզները ցույց են տալիս, որ այն արտադրվել է սույն արհեստանոցում, տեղական հումքի օգտագործմամբ։

Երեք զեկուցում նվիրված էր Դվինի առանձին տեղամասերի պեղումներով բացահայտված համալիրներին, առարկաների առանձին խմբերին։ Ա. Ս. Ժամկոչյանի զեկուցումը ներկայացրեց Դվինի ստորին բերդի պեղումները։ Ֆ. Ս. Բաբայանը պատմեց ստորին բերդում բացված արտադրական համալիրի մասին։ Ն. Գ. Հակոբյանը հրապարակեց Դվինում վերջին տարիների պեղումներից հայտնաբերված մետաղե առարկաների հարուստ ժողովածուն։

Ս. Վ. Հարությունյանի զեկուցումը նվիրված էր Մարմաշենի պեղումներին և, հատկապես, այստեղ գտնված միջնադարյան երկու ամրոցների ուսումնասիրությանը։ Մարմաշենի ձորում մշակույթի վաղագույն հուշարձանները թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակով, սակայն այդ շրջանի բնակավայրերի ծաղկման ժամանակաշրջանը միջնադարն է։ Հայտնաբերվել են վաղ միջնադարյան երկու փոքր եկեղեցիներ և մի քանի ուրիշ եկեղեցիներ, որոնք թվագրվում են X—XII դդ.։ Առավել ուշագրավ են X դարում կառուցված Վահրամաբերդ և Տիրաշեն ամրոցները, որոնք հյուսիսից պաշտպանում էին Անի մայրաքաղաքը։ Դրանք սկզբունքորեն միատիպ կառույցներ են, որոնց հատակագծային լուծումը նորություն է միջնադարյան ամրոցաշինության պատմության մեջ։

Միջնադարյան Հայաստանի վանական համալիրների ուսումնասիրությունը սերտորեն կապված է վիմագրական հետազոտությունների հետ։ Դ. Մ. Գրիգորյանը, հանդես գալով «Վահանավանքի դամբարանատան նորահայտ արձանագրությունները» զեկուցումով, վիմագիր նյութեր հրապարակեց Սյունիքի XI դարի հոգևոր մշակույթի այս կարևոր օջախի պեղումներից։ Հայտնաբերված արձանագրություններում հիշատակված են Սյունիքի և Ադվանքի նշանավոր գործիչների անուններ, նրանց կյանքին ու գործունեությանը վերաբերող տարեթվեր։ Գ. Գ. Սարգսյանի զեկուցումը նվիրված էր մինչ այժմ մասնագետների կողմից չուսումնասիրված Գհուկի վանքի արձանագրություններին (վանքը գտնվում է Հրազդանի շրջանի Արզական գյուղից 3—4 կմ հյուսիս)։ Վանքի գործունեության շրջանը, ըստ զեկուցողի, տևել է XIII դարի սկզբից մինչև XIV դարի կեսերը։ Բազմազան և հետաքրքիր բովանդակությամբ արձանագրությունները պահպանել են նաև վանքի իսկական անունը՝ Բոլորահաղ։

Գ. ԱՐԵՇՅԱՆ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵՐԳԱՐՎԵՍՏԻ ԵՐԿՈՒ ՆՈՐԱՀԱՅՏ ԲԵԿՈՐ

Հայ միջնադարյան երաժշտական մշակույթի զգալի մասը հասել է մեզ բանավոր և գրավոր ավանդույթի շնորհիվ, պահպանվել հայ արվեստի և գիտության երախտավորների ջանքերով։ Միջնադարյան երգարվեստի բազում նմուշներ այսօր էլ գեղագիտական հաճույք են պատճառում, գրավում են հայ կոմպոզիտորներից շատերի ուշադրությունը, յուրատեսակ արտահայտություն գտնելով նրանց ստեղծագործության մեջ։

Սակայն այդ նմուշների առավել զգալի մասը ցրված է աշխարհով մեկ կամ կորսված է ու մոռացված։ Երբեմն միայն, դեպքից դեպք, մեզ են հասնում այդ մշակույթի առանձին պատա-

Դանդաղ ♩=63 մ.մ

Օրհ-նեալ է Աստ- ուած Գով-եալ

է Աստ- ուած, փա-ռա-ւոր-եալ

է Աստ- ուած, Ով բա-րի քրիս- տո-

ղ.եայք (յք) ե-կայք ի Սուրբ ե-կե-ղե - ցի

Նկար 1

Զափաւոր ♩=70 մ.մ.

Օրհ-նեալ է Աստ- ուած Գով-եալ է Աստ- ուած

փա-ռա-ւոր-եալ է Աստ- ուած Ա- ռա-ւօր-

-եան Լոյն է ծա- գեալ

ո-ղջ-մտեր-նան գուն է բաց- վեալ Ով բա-րի

քրիս-տո- նեայք ե-կայք ի Սուրբ ե-կե- ղե - ցի

Նկար 2

ռիկներ, որոնք գալիս են լրացնելու մեր դիտելիքներն ու պատկերացումները հայ ժողովրդի գեղարվեստական ավանդույթների մասին։

Այդ իսկ պատճառով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում մեզանում մինչ այժմ անհայտ երկու հինավուրց երգ, որոնք իրենց բնույթով ծիսական են և, հավանաբար, ուշ միջնադարի ծնունդ են։ Դրանք, ըստ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի միաբանության անդամ Կյուրեղ եպիսկոպոսի պատմածի (որից ձայնագրված են երգերը), ժամկոչական երգեր են, որ մինչև վերջերս կատարվելիս են եղել Երուսաղեմում, տոնական օրերին, առավոտյան ժամը չորսին, ժամերգությունից առաջ։ Այս երգերը կատարում էր ծեր ժամկոչ խորենը։

Հարկ է նշել, որ ժամկոչական երգեցողության ավանդույթը չի պահպանվել Արևելյան Հայաստանի տարածքի վրա։ Ըստ երևույթին, այն ավելի հատուկ է եղել Արևմտյան Հայաստանում, որտեղից և հասել է Երուսաղեմ։

Առաջին երգը հոգևոր երգարվեստի մի նմուշ է (տե՛ս նկար 1)։ Այն կրում է ասկետականության, խիստ և զուսպ գեղեցկության դրոշմը և առավել մոտ է շարականներին։ Երաժշտական միտքը կենտրոնացված է մեկ արտահայտիչ եղանակի մեջ, որը հետագայում, հիմքում մնալով անփոփոխ, լրացվում է ձայնաղարդումներով, լադի հենակետերի տարբեր շեշտումներով, նրա ներքին ոլորտների աստիճանական ներգրավումով, որն ընկալվում է իբրև մի նոր էական էմոցիոնալ-իմաստային տեղաշարժ։ Հատկանշական է ավարտական մասը, որն ինտոնացիոն առումով ընդհանրացնում է ամբողջ երգը։ Ունենալով յուրահատուկ կառուցվածք՝ դադարներով մեկուսացված, կարծես միանման դարձվածքների շղթա, երգը շարադրվում, զարգանում է նրանց տարբերակների հաջորդմամբ, որոնք ամեն անգամ նորանոր երանգավորում են հաղորդում հիմնական երաժշտական մտքին։ Ողջ երաժշտական հյուսվածքը աչքի է ընկնում շատ գդայուն և շարժուն ռիթմական նկարագրով։ Նման ենթատեքստում ձայնաղարդումը հաճախակի ստանում է ինքնուրույն ռիթմական միավորների նշանակություն։ Երգը ծավալվում է երկակի լադում (ըստ Քուշնարյանի բնորոշման), այն տարբերությամբ, որ նրա ավարտական մասում ակներև է լադային շեղման տարրը։ Դա յուրօրինակ լուսավորում, հաստատակամ բնույթ է հաղորդում եղրափակող դարձվածքներին, ուժեղացնելով կտորի ընդհանուր արտահայտչականությունը։

Երկրորդ նմուշը (տե՛ս նկար 2) ավելի ծավալուն է, ունի եռամաս կառուցվածքին հարող հատկանիշներ։

Երգը շարադրվում է էոլական լադում, միջին մասում միքսոլիդիականի բնորոշ հակադրությամբ և հետագա անցումով դեպի նախնական լադը։ Առաջինի հետ այստեղ ընդհանուր են ձևակառուցման տարբերակային սկզբունքը, ձայնաղարդումների առատությունը, մետրառիթմական բազմազանությունը։ Սակայն էական տարբերություն է ցուցաբերում երգի բուն մեղեդիականության (մելոդիկայի), ինտոնացիոն նկարագրի բնույթը։ Այս երգը առավել արժեքավոր է այն առումով, որ մոտ է ժողովրդական սրտառուչ, քնարական երգերին։ Այսպիսի նմուշի գոյատևումը թույլ է տալիս զգալու ժողովրդական հիմքի կենսունակությունը, նրա թափանցումը հոգևոր երաժշտության ոլորտ։

Ժանրային տեսակետից այս երգերը երկակի պատկանելություն ունեն։ Ժամկոչը ժողովրդական, հաճախ գեղջկական զանգվածի ներկայացուցիչ է, և նրա դերը եկեղեցու մեջ բավական համեստ է։ Իր երգեցողությամբ նա դիմում է ժողովրդին, խոսելով նրան առավել հասկանալի երաժշտական լեզվով։ Այս տեսակետից բոլորովին պատահական չէ, որ երգերից մեկը հարում է շարականներին, իսկ մյուսը մոտ է հոգևոր երգարվեստի տարրեր ներառած ժողովրդական երգերի շարքին։

Հատկանշական է նաև, որ երկու երգն էլ ունեն գրեթե համանման, հավանաբար, որոշակի փուլում կանոնականացված տեքստ։ Դա ևս մեկ ապացույց է, որ այս երգերը բավական խոր արմատներ ունեցող ժողովրդական հինավուրց մի ավանդույթի պատկանող նմուշներ են։

Ա. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայկական գորգագործությունը ժողովրդական և կիրառական արվեստի հնագույն տարածված ճյուղն է։ Հայկական գորգը աչքի է ընկնում կենդանական, թռչնական, բուսական, կենցաղային իրերի, գործիքների, տիեզերական մարմինների և այլ ոճավորված զարդանկարներով։ Գրավիչ են հայկական գորգերի գույներն ու երանգները՝ կարմիր դաշտ, որի վրա մեղմ ու արտահայտիչ համադրություններով տեղադրված են այլ գույներ։ Առանձնահատուկ է հայկական գորգի մակերեսի զարդանկարային հորինվածքը, շատ նկարներ նմա-